# ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱՀԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

## ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

# ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱՀՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

«Հեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության տեսակետների հետ:

# ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱՀԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

## ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲ _____

**քրեաիրավական մասնագիտացմամբ դատավորներ, դատախազներ** _____

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿ՝ _____ **հեռաուսուցում** _____

ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԹԻՎԸ՝ _____

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ՝ _____.05.2022 – _____.06.2022

ՈՒՍՈՒՑԱՆՈՂՆԵՐ/ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐ՝

**Աննա Մարգարյան, Տաթևիկ Սուջյան, Դավիթ Թումասյան**

_____

## ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին աշխարհում նկատվում է սեռով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի ուժգնացում՝ համապատասխանաբար թե՛ քրեաիրավական, թե՛ քրեադատավարական ներգործության մեթոդներով: Հայաստանի Հանրապետությունն անմասն չէ միջազգային զարգացման տենդենցներից և մաս կազմելով միջազգային հանրույթի վավերացրել կամ ստորագրել է հիմնական այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են սեռով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարին՝ զուգահեռաբար փոփոխություններ իրականացնելով ազգային օրենսդրությունում: Դրա վառ ապացույցն են 2021թ.-ին ընդունված ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերը, որոնք բովանդակում են միջազգային առաջադիմական պրակտիկան թե՛ սեռով պայմանավորված կամ ընտանեկան բռնության ենթարկված անձանց, թե՛ անչափահասների իրավունքների պաշտպանության համատեքստում:

Այդ անձանց իրավունքների խախտումները պայմանավորված են ոչ միայն այդ անձանց խոցելիությամբ և գործնականում հանդիպող երկրորդային զոհականացմամբ, այլ նաև օրենսդրական բացերի պատճառով:

Դասընթացը բովանդակում է վերոնշյալ հարցերի լուսաբանմանը նվիրված թեմաներ՝ սեռով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի համատեքստում՝ խաչաձև ներկայացնելով անչափահասների, ընտանիքում բռնության, սեռով պայմանավորված բռնության հիմնախնդիրները, մանրամասն լուսաբանվում է անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները:

## ՀԵՌԱՌԻՍՈՒՅՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Սույն դասընթացի նպատակն է ունկնդիրներին ծանոթացնել ՀՀ-ում սեռով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորութ-

յան դեմ պայքարի իրավական հիմքերին, սեռով պայմանավորված և ընտանեկան բռնության ենթարկված անձանց և երեխաների իրավունքների պաշտպանության, ինչպես նաև անչափահասների արդարադատության համակարգին, ներկայացնել այդ անձանց պաշտպանության ներպետական և միջազգային փաստաթղթերում նախատեսված հիմնարար սկզբունքները, պահանջները, հիմնախնդիրները, պաշտպանության ընթացակարգերը, ինչպես նաև անչափահասին մեղսագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի դատավարական առանձնահատկությունները երեխայի լավագույն շահի ապահովման համատեքստում և անչափահասի իրավաչափ շահերի ապահովման դատավարական երաշխիքները:

## ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Յուրաքանչյուր ունկնդրի իմացության (դասին մասնակցության) հիմնական ցուցիչներն են ինքնաստուգիչ հարցերին տրված պատասխանները:

Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ունկնդիրը

- Կունենա ամբողջական գիտելիք սեռով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրների, անչափահասների նկատմամբ կիրառվող պատժի համակարգի առնչությամբ.
- Կկարողանա կիրառել անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելու առանձնահատկությունները, լիարժեքորեն կպատկերացնեք անչափահասներին պատժից ազատելու քրեաիրավական և քրեադատավարական մեխանիզմները.
- Կկարողանա հստակ տարբերակել անչափահասների հանդեպ կատարվող սեքսուալ ոտնձգությունները և ընտանեկան բռնության դրսևորումները:
- Կծանոթանա անչափահասի կարգավիճակի որոշման ընթացակարգերին և ընթացակարգային երաշխիքներին: Կոնկրետ դեպքերի վերլուծությունների միջոցով կկարողանաք մասնագիտական եզրահանգումներ անել և տեսա-

կետներ առաջադրել նշված գործընթացի շրջանակում առավել հաճախ ծագող ապացուցման խնդիրներին.

- Կծանոթանա կարծրատիպերի ազդեցությանը քրեական դատավարության օրենսդրության մեջ և սեռով պայմանավորված և ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ քրեական գործերի քննության վարույթում: Կոնկրետ իրավիճակների քննարկման միջոցով կկարողանաք սեփական եզրահանգումներն անել սեռով պայմանավորված և ընտանեկան բռնության զոհերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, բռնության դեմ արդյունավետ պայքարի դատավարական մեխանիզմների վերաբերյալ.
- Կկարողանա տարբերակել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով սահմանված պաշտպանության միջոցները և ընտանեկան բռնության վերաբերյալ գործերի քննության քրեադատավարական գործիքակազմը.
- Կկարողանա կիրառել անչափահասին մեղսագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի դատավարական առանձնահատկությունները երեխայի լավագույն շահի ապահովման համատեքստում և անչափահասի իրավաչափ շահերի ապահովման դատավարական երաշխիքները.
- Կկարողանա ամբողջությամբ կիրառել նյութը և առաջադրել նոր հիմնախնդիրներ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սույն հեռաուսուցման դասընթացի հիմանական գաղափարները ներկայացվելու են համապատասխան դասերի/ շաբաթների համար նախատեսված նյութերում: Ստորև հաջորդաբար ներկայացված են յուրաքանչյուր դասի/շաբաթվա նյութերում տեղ գտած և հիմնական գաղափարներին վերաբերող թեմաները.

Նախաբան

Ներածություն

Դաս 1. Անչափահասների նկատմամբ կիրառվող պատժի համակարգը

Դաս 2. Անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելը

Դաս 3. Անչափահասներին պատժից ազատելու առանձնահատկությունները

Դաս 4. Անչափահասներին քրեական պատասխանատվության ենթարկելու առանձնահատկությունները

Դաս 5. Անչափահասների հանդեպ կատարվող սեքսուալ ոտնձգությունները և ընտանեկան բռնության դրսևորումները

Դաս 6. Կարծրատիպերի ազդեցությունը քրեական դատավարության օրենսդրության մեջ և սեռով պայմանավորված և ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ քրեական գործերի քննության վարույթում

Դաս 7. Սեռով պայմանավորված և ընտանեկան բռնության զոհերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, բռնության դեմ արդյունավետ պայքարի դատավարական մեխանիզմները

Դաս 8. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով սահմանված պաշտպանության միջոցների հարաբերակցությունն ընտանեկան բռնության վերաբերյալ գործերի քննության քրեադատավարական գործիքակազմի հետ. Անչափահասին մեղսագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով այլընտրանքային դատավարական մեխանիզմները

Դաս 9. Անչափահասին մեղսագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի դատավարական առանձնահատկությունները երեխայի լավագույն շահի ապահովման համատեքստում

Դաս 10. Անչափահասի իրավաչափ շահերի ապահովման դատավարական երաշխիքները

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինքնաստուգիչ հարցերին պատասխանելու միջոցով ունկնդիրները հնարավորություն են ստանում առավել խորությամբ հասկանալ ինչպես համապատասխան տեքստը, այնպես էլ դրա կիրառական արժեքը: Տեքստային նյութին կցված են մեդիա նյութեր:

## ՏԵՍԱՁԱՅՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Հեռաուսուցման դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ են՝

1 Համակարգիչ (ունկնդրման հարմարություններով),

2 Համացանց մուտք գործելու հնարավորություն (Wi-Fi սարքավորում և այլն):

## ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱՁԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Տվյալ դասընթացի թեմաների յուրացման համար բավարար են իրավագիտության ոլորտի, հատկապես՝ քրեական իրավունքի և քրեական դատավարության ուղղվածությամբ հիմնարար գիտելիքներ:

## ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Հեռաուսուցման դասընթացի ժամանակացույցը մանրամասն ներկայացված է ուսումնական պլանում: Հեռաուսուցման դասընթացի ընդհանուր տևողությունը 10 շաբաթ է (յուրաքանչյուր շաբաթ՝ 4 ժամ ծավալով, ընդհանուր՝ 40 ժամ ծավալով):